Հավելված N 8

Հաստատված է
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
գլխավոր քարտուղարի
2020 թվականի մայիսի 7-ի
թիվ 54-Ա հրամանով

Կատարված է փոփոխություն
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
գլխավոր քարտուղարի
2020 թվականի հուլիսի 21-ի
թիվ 85-Ա հրամանով

Կատարված է փոփոխություն
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
գլխավոր քարտուղարի
2023 թվականի հունիսի 15-ի
թիվ 89-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ավիացիոն անվտանգության վարչության (այսուհետ՝ Վարչություն) ավագ մասնագետ (այսուհետ՝ Ավագ մասնագետ) (ծածկագիրը՝ **22-4-23.2-Մ3-3**)

(Ծածկագիրը փոփոխվել է 21.07.20թ. Հր. N 85-Ա)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կոմիտեի գլխավոր քարտուղարի հրամանում նշված անձը:

(1.3-րդ բաժինը փոփոխվել է 15.06.23թ. Հր. N 89-Ա)

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է ՀՀ օդանավակայաններում և ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքներում ավիացիոն անվտանգության ապահովման միջոցառումների, վթարափրկարարական և հակահրդեհային անվտանգության աշխատանքների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացմանը.
2. մասնակցում է ՀՀ քաղաքացիական ավիացիայի համակարգում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպություններում ավիացիոն անվտանգության համակարգի որակի հսկողության միջոցառումներին և իրականացված միջոցառման ընթացքում հայտնաբերված թերությունների ու անհամապատասխանությունների վերացման վերահսկողության աշխատանքներին.
3. մասնակցում է ՀՀ օդանավակայանների հատուկ վերահսկելի գոտիներ մուտքի իրավունք ունեցող աշխատակիցների, ինչպես նաև ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների թռիչքային անձնակազմի անդամների նախապատմության ստուգման աշխատանքներին.
4. մասնակցում է ՀՀ քաղաքացիական ավիացիայի համակարգում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև դեպի ՀՀ օդանավակայաններ և ՀՀ օդանավակայաններից թռիչքներ իրականացնող օտարերկրյա օդանավ շահագործողների ավիացիոն անվտանգության ծրագրերի ուսումնասիրություններին և դրանց համապատասխանության մասին եզրակացությունների տրամադրման աշխատանքներին.
5. իրականացնում է Կոմիտեի աշխատակիցներին և ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործողների օդանավերի անձնակազմերի անդամներին թռիչքային անցագրերի պատրաստման և տրամադրման աշխատանքները.
6. նախապատրաստում է ավիացիոն անվտանգության գծով հրամանների նախագծերը.
7. մասնակցում է Վարչության գործառույթների հետ կապված առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի և գրությունների նախապատրաստման աշխատանքներին:

Իրավունքները՝

- համապատասխան կազմակերպություններից ստանալ ՀՀ օդանավակայաններում և ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքնե-րի ավիացիոն անվտանգության ապահովման միջոցառումների, վթարափրկարա-րական և հակահրդեհային անվտանգության աշխատանքների կատարման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ և տեղեկություններ, ներառյալ՝ համակարգիչներում պահվող տեղեկությունները.
- ստանալ տեղեկատվություն ՀՀ քաղաքացիական ավիացիայի համակարգում ավիացիոն գործունեության իրականացնող կազմակերպություններում ավիացիոն անվտանգության համակարգի որակի հսկողության միջոցառումների արդյունքների վերաբերյալ.
- ստանալ տեղեկատվություն համապատասխան կազմակերպություններից ՀՀ օդանավակայանների հատուկ վերահսկելի գոտիներ մուտքի իրավունք ունեցող աշխատակիցների, ինչպես նաև ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների թռիչքային անձնակազմի անդամների նախապատմության ստուգումների համար անհրաժեշտ տեղեկատվություն.
- ստանալ ՀՀ քաղաքացիական ավիացիայի համակարգում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև դեպի ՀՀ

օդանավակայաններ և ՀՀ օդանավակայաններից թռիչքներ իրականացնող օտարերկրյա օդանավ շահագործողների ավիացիոն անվտանգության ծրագրերի ուսումնասիրության արդյունքների մասին անհրաժեշտ տեղեկատվություն.

- Կոմիտեի համապատասխան աշխատողներից և ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործողների օդանավերի անձնակազմերի անդամներից պահանջել թռիչքային անցագրերի պատրաստման և տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր.
- Կոմիտեի աշխատողների, պետական մարմինների ու շահագրգիռ կազմակերպու-թյունների ներկայացուցիչների հետ մասնակցել առաջադրված խնդիրների լուծման նպատակով կազմակերպվող մասնագիտական քննարկումներին:

Պարտականությունները՝

- ներկայացնել առաջարկություններ ՀՀ քաղաքացիական ավիացիայի համակարգում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպություններում ավիացիոն անվտանգության համակարգի որակի հսկողության միջոցառումների արդյունքների վերաբերյալ.
- ստանալ ՀՀ օդանավակայանների հատուկ վերահսկելի գոտիներ մուտքի իրավունք ունեցող աշխատակիցների, ինչպես նաև ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների թռիչքային անձնակազմի անդամների նախապատմության ստուգումների համար անհրաժեշտ տեղեկատվություն և ստուգումների արդյունքների վերլուծության մասին ներկայացնել առաջարկություններ Վարչության պետին.
- ՀՀ քաղաքացիական ավիացիայի համակարգում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև դեպի ՀՀ օդանավակայաններ և ՀՀ օդանավակայաններից թռիչքներ իրականացնող օտարերկրյա օդանավ շահագործողների ավիացիոն անվտանգության ծրագրերի ուսումնասիրությունների արդյունքում ստացած տեղեկատվության հիման վրա ներկայացնել առաջարկություններ Վարչության պետին.
- Կոմիտեի համապատասխան աշխատակիցներին և Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործողների օդանավերի անձնակազմերի անդամների համար կազմել և տրամադրել թռիչքային անցագրեր.
- ուսումնասիրել Կոմիտեի ավիացիոն անվտանգության հարցերով բողոքների, դիմումների և առաջարկությունների, վերլուծությունները և դրանց վերաբերյալ առաջարկությունները և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ և զեկուցագրեր Վարչության պետին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ավիացիայի բնագավառում ավիացիոն անվտանգության գործունեության կամ իրավունքի բնագավառում մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումների և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: